



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 04 » հոկտեմբեր 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 470-Ղ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԿՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Հայկական Ավիաուղիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝


1. «Հայկական Ավիաուղիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ

հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 210-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում, և հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

 Восстановимая подпись

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ ՈՒ Յ Լ Տ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 016/2023
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱԿ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ
ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 016/2023
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Հայկական Ավիաուղիներ» ՍՊԸ "Armenian Airlines" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A321
Հաճախականությունը Frequency	շաբաթական 3 չվերթ 3 flights per week
Երթուղին Air route	Երևան/UDYZ/ - Ստամբուլ/LTFM/ - Երևան/UDYZ/ Yerevan/UDYZ/ - Istanbul/LTFM/ - Yerevan/UDYZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	29/10/2023 մինչև 29/03/2024 29/10/2023 till 29/03/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN



Восстановимая подпись

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

09 10 2023

(տալու
ամսաթիվը)
(date of issue)